

**«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ
Տրանսպորտային միջոցների ապահովագրության
կանոններ**

Բովանդակություն

1. ԲԱԺԻՆ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
2. ԲԱԺԻՆ 2: ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	3
3. ԲԱԺԻՆ 3: ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ («Ավտոկասկո») «Բաժին Ա»	4
4. ԲԱԺԻՆ 4: ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ «Բաժին Բ»	7
5. ԲԱԺԻՆ 5: ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ- «Բաժին Գ»	8
6. ԲԱԺԻՆ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.....	9
7. ԲԱԺԻՆ 7: ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ	12
8. ԲԱԺԻՆ 8: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ	12
9. ԲԱԺԻՆ 9: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԱԳԱՅՎԱԾ ՎԱՐՈՒՅԹ	15
10. ԲԱԺԻՆ 10: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	15
11. ԲԱԺԻՆ 11: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ	18
12. ԲԱԺԻՆ 12: ՍՈՒԲՐՈՂԳԱՅԻԱ	18
13. ԲԱԺԻՆ 13: ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	18
14. ԲԱԺԻՆ 14: ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19
15. ԲԱԺԻՆ 15: ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ, ՎԵՐԱՑՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ	19

ԲԱԺԻՆ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Կանոնները սահմանում են գույքային շահերի կամավոր ապահովագրության կայմանագրի (վկայագրի) ընդհանուր դրույթները և կնքման կարգը, կատարման և դադարեցման կարգը, կապված Տրանսպորտային միջոցի (այսուհետև՝ SU) տիրապետման, օգտագործման և շահագործման հետ:

Սույն Կանոնների ներքո «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱԲԲԸ իրականացնում է ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրության հետևյալ դասերով.

- Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն,
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- Դժբախտ պատահարների ապահովագրություն:

1. Սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:
2. Անձը, որը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հետ կնքում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, այսուհետ անվանվում է ԱՊԱՀՈՎԱԳՐԻ:
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ կարող է կնքել ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ինչպես իր, այնպես էլ ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձի (այսուհետև՝ ՇԱՀԱՌՈՒԻ) օգտին, ով ունի ապահովագրվող SU նկատմամբ գույքային կամ անձնական շահ:
4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման ժամանակ ԱՊԱՀՈՎԱԳՐԻՆ տրվում է ԿԱՆՈՆՆԵՐԻ մեկ օրինակ, ինչի մասին հատուկ նշվում է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ (վկայագրում), որի դրույթները դառնում են ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (վկայագրի) անբաժան մասը և պարտադիր են ԱՊԱՀՈՎԱԳՐԻ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ համար, որոնք այսուհետ անվանվում են ԿՈՂՄԵՐ:
5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման ժամանակ ԿՈՂՄԵՐԸ կարող են պայմանավորվել սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ որևէ առանձին դրույթի փոփոխության (բացառման) և/կամ լրացուցիչ դրույթների ավելացման մասին, որոնք չեն հակասում գործող օրենսդրությանը և սահմանվում են առանձին լրացումներում՝ հանդիսանալով ԿԱՆՈՆՆԵՐԻ անբաժան մաս:
6. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) ԿՈՂՄԵՐԻ գրավոր համաձայնությամբ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, սակայն մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում գործող օրենսդրությանը:
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ սահմանված պատասխանատվությունը դադարում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻ գործողության ժամկետի ավարտով կամ սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ և/կամ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ նախատեսված այլ դեպքերում:
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԻՆ իրավունք ունի ՊԱՅՄԱՆԱԳՐԻ գործողության ընթացքում ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ նշված ՇԱՀԱՌՈՒԻՆ փոխարինել այլ անձով: ՇԱՀԱՌՈՒԻ փոխարինման մասին ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ պետք է գրավոր ծանուցի ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ: ՇԱՀԱՌՈՒԻ չի կարող փոխարինվել այլ անձով այն դեպքում, եթե նա իրականացրել է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ սահմանված որևէ պարտականություն կամ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջ:

ԲԱԺԻՆ 2: ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. **Լիազորված վարորդ՝** ֆիզիկական անձ, ով օրենքով սահմանված կարգով ապահովագրական պայմանագրում նշված SU վարելու իրավունք ունի:
Եթե Պայմանագրում (վկայագրում) որպես լիազորված վարորդ նշվել է կոնկրետ անձ (անձինք), ապա նրանից (նրանցից) բացի որևէ այլ անձ չի կարող հանդիսանալ լիազորված վարորդ:
ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ պարտավոր է լիազորված վարորդին ծանոթացնել կնքված ՊԱՅՄԱՆԱԳՐԻ պայմաններին և բովանդակությանը: SU տիրապետելու ընթացքում լիազորված վարորդն իրականացնում է սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ նշված ԱՊԱՀՈՎԱԳՐԻ այն պարտականությունները, որոնք կապված են SU շահագործման, պահպանման հետ:
Լիազորված վարորդի կողմից ԱՊԱՀՈՎԱԳՐԻ պարտականությունների չկատարումը կունենա նույն հետևանքները, որոնք կառաջանային, եթե նույն պարտականությունները չկատարվեին ԱՊԱՀՈՎԱԳՐԻ կողմից: Լիազորված վարորդը պետք է ունենա նվազագույնը 3 տարվա վարորդական փորձ, և նրա տարիքը պետք է գերազանցի 21 տարին: Վերոնշյալ պայմաններին չհամապատասխանելու դեպքում ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ (վկայագրում) նշված ոչ պայմանական չհատուցվող գումարը կրկնապատկվում է: Լիազորված վարորդները նշվում են ապահովագրական վկայագրում, եթե վերջիններս նշված չեն, ապա SU կարող է վարել ցանկացած անձ, ով կբավարարի սույն կանոններով «լիազորված վարորդ» հասկացությանը:
10. **Տրանսպորտային միջոցներ (SU)**՝ մեքենաներ, որոնք նախատեսված են մարդկանց, բեռները կամ դրանց ամրակցված սարքավորումները ճանապարհներով փոխադրելու համար, և որոնք գործարկվում են շարժիչով, որի աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր.սմ-ը, կամ որոնց առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը: SU հասկացությունը տարածվում է նաև ցանկացած տիպի տրակտորների և ինքնագնաց մեքենաների վրա:

11. **Տրանսպորտային միջոցների տնօրինողներ՝** անձինք, ովքեր շահագործում են ՏՄ և հանդիսանում են դրանց սեփականատերեր կամ տնօրինում են դրանք որևէ այլ օրինական հիմքերով: Սույն հասկացությունը չի տարածվում այն քաղաքացիների վրա, ովքեր ՏՄ օգտագործում են վարձակալության իրավունքով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն:
12. **Տուժած անձինք.**
 - 12.1. քաղաքացիները, ովքեր, համաձայն ՀՀ օրենսդրության, իրենց կյանքին, առողջությանը կամ գույքին ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով հասցված վնասի արդյունքում ունեն հասցված վնասի հատուցման իրավունք,
 - 12.2. քաղաքացիները, ովքեր, համաձայն ՀՀ օրենսդրության, ունեն ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում կերակրողի կորստի, ինչպես նաև թաղման ծախսերի հետ կապված վնասի հատուցման իրավունք,
 - 12.3. իրավաբանական անձինք, որոնք, համաձայն ՀՀ օրենսդրության, ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով իրենց գույքին հասցված վնասի արդյունքում ունեն հասցված վնասի հատուցման իրավունք:
13. **Ճանապարհատրանսպորտային պատահար՝** պատահար, որը ծագում է ՏՄ շահագործման ընթացքում և/կամ դրա մասնակցությամբ, որի արդյունքում վնաս է հասցվում մարդկանց կյանքին, առողջությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքին, ապահովագրված ՏՄ կամ այլ ՏՄ:

ԲԱԺԻՆ 3: ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ **(«Ավտոկասկո») – «Բաժին Ա»**

Ապահովագրության պայմանագրի առարկան և կնքման կարգը

14. Սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ «Ավտոկասկո» ապահովագրության պայմանագրի ներքո հասկացվում է ԿՈՂՄԵՐԻ միջև համաձայնություն, ըստ որի՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պայմանագրով սահմանված վճարի դիմաց (ապահովագրավճար) պայմանագրում նախատեսված պատահարների (ապահովագրական պատահարներ) դեպքում պարտավորվում է հատուցում վճարել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում տվյալ պատահարի հետևանքով ապահովագրված գույքին (ապահովագրված ՏՄ և լրացուցիչ սարքավորումներին (այսուհետ՝ ԼՍ)) պատճառված իրական վնասի համար: Սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ «իրական վնասի» ներքո հասկացվում են ՏՄ վնասվածքը կամ կորուստը, ինչպես նաև ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ նշված այն ծախսերը, որոնք կատարել է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ (ՇԱՀԱՌՈՒՆ), և որոնք կապված են ՏՄ կորստի կամ վնասվածքի հետ: Ապահովագրական հատուցումը կարող է տրամադրվել այլ անձի, ում օգտին կնքվել է ապահովագրական պայմանագիրը՝ ՇԱՀԱՌՈՒՆ:
15. Ապահովագրական պայմանագիրը կնքվում է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
16. Ապահովագրական պայմանագիրը կարող է կնքվել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա կազմված ապահովագրական վկայագիրը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ տրամադրելու միջոցով:
17. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ գրավոր (բանավոր) դիմումը ստանալուց հետո իրավունք ունի նրանից պահանջել.
 - 17.1. ՏՄ գնման հնարավորություն,
 - 17.2. լրացուցիչ տվյալների տրամադրում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված այն հանգամանքների հետ, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա դեպքում վնասի հնարավոր մեծության որոշման համար:
18. Եթե ապահովագրական պայմանագրի կնքումից հետո հայտնի դառնա, որ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պայմանագրի կնքման ժամանակ ներկայացրել է կեղծ տվյալներ, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել ապահովագրական պայմանագիրը և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետևանքները:
19. ՇԱՀԱՌՈՒՆ (Ապահովագրված անձի) կողմից ապահովագրության պայմանագրի պայմանների խախտումը կհամարվի ապահովագրության պայմանագրի պայմանների խախտում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից:
20. Ըստ սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Վրաստանի, ԱՊՀ երկրների և Իրանի տարածքները, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովագրության օբյեկտը

21. Համաձայն սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ «Բաժին Ա» (Ավտոկասկո ապահովագրություն)՝ ապահովագրական պայմանագրով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ (կամ ՇԱՀԱՌՈՒՆ) գույքային շահերը կապված ՏՄ (ներառյալ ՏՄ ամրակցված լրացուցիչ սարքավորումները) տիրապետման, օգտագործման և տնօրինման ընթացքում առաջացած իրական վնասի հետ:
22. Տրանսպորտային միջոցի ներքո հասկացվում են հետևյալ ՏՄ-ները.
 - 22.1. ավտոմեքենաներ՝ մարդատար, բեռնատար, բեռնամարդատար,
 - 22.2. ավտոբուսներ և այլ մարդատար ՏՄ,
 - 22.3. կցասայլեր և կիսակցասայլեր,
 - 22.4. մոտոցիկլետներ, մոտորանիվներ, մոտորասայլակներ,

- 22.5. կողմերի համաձայնությամբ այլ ինքնագնաց սարքեր, այդ թվում՝ գյուղատնտեսական և քարշակային SU, օժանդակ և գյուղատնտեսական այլ մեխանիզմներ:
23. Ապահովագրման ենթակա չեն այն SU, որոնք Հայաստանի Հանրապետության տարածք են ներկրվել գործող մաքսային նորմերի և կանոնների խախտմամբ կամ որոնք գրանցված են ՀՀ պետական կառավարման մարմինների և Ինտերպոլի տեղեկատվական տվյալների բազայում՝ որպես նախկինում գողացված: Սույն հոդվածում նշված դրույթի խախտմամբ կնքված ապահովագրական պայմանագրերով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ չի կրում ոչ մի պարտավորություն, այդ թվում՝ ապահովագրական հատուցման տրամադրման և այդ դեպքում պայմանագիրը համարվում է անվավեր, և ապահովագրավճարը ենթակա չէ ետ վերադարձման:
24. SU, որն ունի վնասվածք և/կամ մաշվածություն, ապահովագրվում է միայն այն պայմանով, որ նման վնասվածքը և/կամ մաշվածությունը կվերականգնվի ԱՊԱՀՈՎԱԳՐԻ կողմից իր իսկ հաշվին (ապակե կամ պլաստիկ բաղադրամասերի ցանկացած վնասվածք ենթադրում է դրանց պարտադիր փոխարինում այլ բաղադրամասերով), իսկ SU կենթարկվի լրացուցիչ վերագնման (թերությունների վերացումից հետո): Հակառակ դեպքում նման բաղադրամասերի վնասվածքների հետ կապված հայցերը չեն ուսումնասիրվի, իսկ ամբողջական ոչնչացման, հափշտակման կամ գողության դեպքում ապահովագրական հատուցման տրամադրման ժամանակ վնասվածքների և/կամ մաշվածության գումարը կհանվի հատուցման գումարից՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հաշվարկների համաձայն:
25. Որպես SU ամրակցված ԼՍ՝ ապահովագրության ենթակա են այն սարքավորումներն ու պարագաները, որոնք չեն կազմում SU արտադրող գործարանի կողմից նախատեսված լրակազմի մասը կամ SU և ԼՍ զննումից հետո կողմերի համաձայնությամբ համարվում են լրացուցիչ սարքավորումներ:

Ապահովագրական ռիսկ

- 25.1. Ապահովագրական ռիսկն առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավորությունն է:
- 25.2. «ՃՏՊ» (ճանապարհատրանսպորտային պատահար) – պատահար, որը ծագում է ապահովագրված SU ճանապարհային երթևեկության ընթացքում (վրաերթ, շրջում, բախում և այլն)՝ ներառյալ այլ մեխանիկական տրանսպորտային միջոցի պատճառով կանգառի վիճակում SU հասցված վնասը:
- 25.3. «Հրդեհ» - անվերահսկելի այրում կամ պայթյուն, որը ծագել է արտաքին ազդեցության արդյունքում: Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ՝ «հրդեհի» ներքո կարելի է հասկանալ նաև անվերահսկելի հրդեհումը կամ պայթյունը, որը ծագել է տրանսպորտային միջոցի ինքնայրման հետևանքով:
- 25.4. «Վնասվածք (ընդ որում թռչող կամ վայր ընկնող առարկայի հետևանքով)» - SU վրա այլ առարկայի արտաքին ազդեցությունը (ընդ որում տրանսպորտային միջոցների անիվների տակից մանրախճի, քարերի կամ այլ կոշտ գոյացությունների արտանետումը)՝ բացառությամբ գունափայլային շերտի կետային վնասվածքների՝ առանց SU դետալների վնասման (կոտրման):
- 25.5. «Տարերային աղետ» - բնության տարերքների արտաքին ազդեցությունը SU վրա՝ կայծակ, երկրաշարժ, բուք, փոթորիկ, ջրհեղեղ, մրրկայուն, կարկուտ:
- 25.6. «Չարամիտ գործողություններ» - երրորդ անձանց կողմից SU նկատմամբ անօրինական գործողությունների իրականացում կամ իրականացման փորձ, այդ թվում՝ ապահովագրված SU բանալիների առևանգում:
- 25.7. «Կենդանիների գործողություններ» - SU վնասվածքի պատճառում կենդանիների գործողությունների հետևանքով:
- 25.8. «Առևանգում» - SU կորուստ գողացման, կողոպուտի, բռնության հետևանքով: Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ «Առևանգում» ռիսկի ներքո կարելի է հասկանալ (ներառել) նաև SU առևանգումը խարդախության միջոցով:
- 25.9. «Վնաս» - այն ռիսկերի համակցությունը, որոնք թվարկված են սույն հոդվածի 25.2-25.7 ենթակետերում:
- 25.10. «Ավտոկասկո» - այն ռիսկերի համակցությունը, որոնք թվարկված են սույն հոդվածի 25.2-25.8 ենթակետերում:
26. ԼՍ կարող է ապահովագրվել վերոնշյալ ռիսկերից միայն նրանցով, որոնք կիրառվում են նաև այն SU նկատմամբ, որին ԼՍ ամրակցված է:

Ապահովագրական պարահար

27. Ապահովագրական պատահար է համարվում 25.2-25.8 ենթակետերում թվարկված իրադարձություններից յուրաքանչյուրը, որը նախատեսված է ապահովագրության պայմանագրով և հանգեցրել է SU և/կամ դրան ամրակցված ԼՍ վնասվածքի, կորստի (ոչնչացմանը), և որի հետևանքով առաջացել է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ՝ ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:
28. **Ապահովագրական պատահար չեն համարվում հետևյալ իրադարձությունները.**
- 28.1. SU գրանցման նշանների (պետհամարանիշ) գողությունը, կորուստը կամ վնասվածքը,
- 28.2. անիվների (անվադողերի, անվային սկավառակների) վնասվածքը, որը կապված չէ այն վնասվածքի հետ, որը պատճառվել է SU որևէ այլ բաղադրիչ մասի կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անիվները վնասվում են երրորդ անձանց չարամիտ գործողությունների հետևանքով: Ցանկացած դեպքում չի հատուցվում SU պատճառված այն վնասը, որը կապված է SU անվադողերի հետ, եթե SU շահագործումը ՀՀ նորմատիվ իրավական ակտերով արգելված է տվյալ անվադողերի անբավարար վիճակի պատճառով,
- 28.3. շահագործման արդյունքում SU բաղադրիչների, հանգույցների և ագրեգատների կոտրումը, արգելակումը կամ շարքից դուրս գալը (բացառությամբ ՃՏՊ)՝ ներառյալ օտար առարկաների և իրերի ագրեգատներ ներթափանցմամբ պայմանավորված (հիդրոհարված և այլն) դեպքերը,

- 28.4. ԱՊԱՀՆՎԱԴԻՐԻ կողմից վարձակալության, վարձույթի կամ լիզինգի հանձնված ապահովագրված SU ԱՊԱՀՆՎԱԴԻՐԻՆ չվերադարձնելը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
- 28.5. ապահովագրված SU բանալիների կորուստը,
- 28.6. Ոչ գործարանային պայմաններում վերաձևափոխված տրանսպորտային միջոցները զրկվում են ապահովագրական ծածկույթից «Հրդեհ» ռիսկի մասով, և այդ դեպքում Ապահովագրավճարը վերահաշվարկման և վերադարձման ենթակա չէ:

Ապահովագրական գումար և ապահովագրական արժեք

29. Ապահովագրական գումարը ապահովագրական պայմանագրով որոշված դրամական գումարն է, որի սահմաններում ԱՊԱՀՆՎԱԴԻՐՈՂԸ պարտավորվում է ապահովագրական պատահարի (պատահարների) տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում ապահովագրական պայմանագրով նախատեսված կարգով:
30. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել SU ապահովագրական արժեքը (գույքի իրական արժեքը. այսինքն՝ արժեքը դրա գտնվելու վայրում՝ ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ): Ապահովագրության ներկայացված SU և LU ապահովագրական արժեքը որոշում է ԱՊԱՀՆՎԱԴԻՐՈՂԸ՝ ելնելով դրանց սկզբնական արժեքից և մաշվածության նորմերից, ապահովագրության դիմումի տվյալներից և SU ու LU արժեքը հաստատող փաստաթղթերից: Կողմերի համաձայնությամբ նման փաստաթուղթ կարող է համարվել՝
- հաշիվ-տեղեկանքը,
 - SU գնահատման ակտը,
 - արտադրող գործարանի կամ պաշտոնական ներկայացուցչի (վաճառողի) հաշիվ-ապրանքագիրը,
 - չեկերը, անդորրագրերը և վճարման այլ փաստաթղթերը,
 - մաքսային փաստաթղթերը,
 - դիլերների գնացուցակները,
 - կատալոգները արտասահմանյան SU համար, այլ տեղեկատու կամ պարբերական գրականությունը:

«Լրիվ», «Ոչ լրիվ համամասնական», «Ոչ համամասնական» ապահովագրություն

31. ապահովագրական պայմանագիրը կարող է կնքվել «լրիվ», «ոչ լրիվ համամասնական», «ոչ համամասնական» ապահովագրության պայմաններով:
- 31.1. Ապահովագրությունը համարվում է «լրիվ», եթե ապահովագրական գումարը հավասար է SU ապահովագրական արժեքին: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ամբողջ ծավալով, որը որոշվում է համաձայն ապահովագրական հատուցման վճարման պայմանների:
- 31.2. Ապահովագրությունը համարվում է «ոչ լրիվ համամասնական», եթե ապահովագրական գումարը սահմանված է SU ապահովագրական արժեքի գումարից պակաս: Նման դեպքում վնասը հատուցվում է մասնակի՝ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերությանը համամասնորեն:
- 31.3. «Ոչ համամասնական» ապահովագրության պայմաններով կնքված պայմանագրերի դեպքում ապահովագրական գումարը կարող է սահմանվել առավելագույնը SU շուկայական արժեքի չափով: Այս պարագայում Ապահովագրական հատուցման իրականացման ժամանակ ապահովագրական արժեքի և ապահովագրական գումարի հարաբերակցությունը հաշվի չի առնվում: Հատուցվում է SU հասցված ամբողջ վնասը՝ նվազեցրած չհատուցվող գումարի չափով: Ապահովագրական հատուցումն իրականացվում է հետևյալ երեք եղանակներով.
- 31.3.1. «ՕՊՏԻՄԱԼ»
Հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը նվազեցվում է հատուցված գումարի չափով: Պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:
- 31.3.2. «ՊՐԵՄԻՈՒՄ»
Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը պահպանվում է, ապահովագրական հատուցումների քանակը սահմանափակ չէ:
- 31.3.3. «ԷԿՈՆՈՄ»
Ապահովագրական հատուցումն իրականացվում է միայն պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած առաջին պատահարի գծով: Ապահովագրական հատուցման իրականացումից հետո պայմանագիրը դադարեցվում է, իսկ պայմանագրի չլրացած ժամանակահատվածի համար վճարված ապահովագրավճարը չի վերադարձվում Ապահովադիրին:
32. LU ապահովագրությունը (եթե այն նախատեսվում է պայմանագրով) հանդիսանում է միայն «լրիվ» ապահովագրություն:

Վնասների հարցման կարգը

33. Ըստ սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ վնասի հատուցումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով SU, դրա հանգույցների և դետալների բնական մաշվածությունը:
Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել վնասի հատուցման երեք համակարգերից որևէ մեկը.
- 33.1. «Նորը հնի փոխարեն»՝ ենթադրում է, որ ապահովագրական հատուցման վճարումը կիրադրվի առանց հաշվի առնելու ապահովագրական պատահարի արդյունքում փոխարինման ենթակա հանգույցների և դետալների մաշվածության տոկոսը՝ բացառությամբ SU առևանգման, գողության և «ամբողջական ոչնչացման» դեպքերի:

- 33.2. «Վճարման գործակցով» ենթադրում է, որ ապահովագրական հատուցման վճարումն իրագործվում է՝ հաշվի առնելով SU մաշվածության տոկոսը: Մաշվածության հաշվարկը կատարվում է համաձայն սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ 79-րդ կետում սահմանված նորմերի: SU մաշվածության տոկոսով որոշվող գործակիցը կիրառվում է վնասի ամբողջ գումարի նկատմամբ՝ ներառյալ աշխատանքների և ծախսվող նյութերի արժեքը:
- 33.3. «Հինը հնի փոխարեն» ենթադրում է, որ ապահովագրական հատուցման վճարումն իրագործվում է՝ հաշվի առնելով փոխարինման ենթակա դետալների (պահեստային մասերի) մաշվածությունը: Մաշվածության հաշվարկն իրագործվում է համաձայն սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ 79-րդ կետում սահմանված նորմերի:
- 33.4. Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում նախատեսվում է ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման երկու տարբերակ.
- 33.4.1. Շուկայական գին, ըստ որի SU վնասը հատուցվում է վերականգնման աշխատանքների և վնասված դետալների շուկայական արժեքով՝ նվազեցրած SU տարիքին համապատասխան մաշվածությունը (ամորտիզացիան),
- 33.4.2. Վերականգնման գին, ըստ որի SU վնասը հատուցվում է վերականգնման աշխատանքների և վնասված դետալների շուկայական ամբողջ արժեքով՝ առանց նվազեցումների:

**ԲԱԺԻՆ 4: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ «Բաժին Բ»**

Ապահովագրության պայմանագրի առարկան և կնքման կարգը

- 34. Ըստ սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ կնքված քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրի՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պարտավորվում է պայմանագրով սահմանված ապահովագրավճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում տուժած երրորդ անձանց ապահովագրական գումարի սահմաններում վճարել ապահովագրական հատուցում ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձի) կողմից պատճառած վնասի չափով:
- 35. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է ԱՊԱՀՈՎԱԳՐԻ գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որը կազմված է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ սահմանված ձևով:
- 36. Ըստ սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովագրության օբյեկտը

- 37. Ապահովագրության օբյեկտը ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձի) գույքային շահերն են՝ կապված SU սեփականատիրոջ, ապահովագրության պայմանագրում նշված տարածքում SU շահագործման ընթացքում տուժած անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու արդյունքում առաջացած քաղաքացիական պատասխանատվության ռիսկի հետ:

Ապահովագրական պատահարներ և ապահովագրության լրացուցիչ պայմաններ

- 38. Ըստ սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ ապահովագրական պատահար է համարվում անձի կողմից (ում պատասխանատվությունն ապահովագրված է) ապահովագրության պայմանագրում նշված SU օգտագործման ժամանակ ՃՏՊ արդյունքում այլ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս հասցնելու իրադարձությունը, որը տեղի է ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում և հիմք է հանդիսացել տուժած անձանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն SU սեփականատիրոջ նկատմամբ վնասի հատուցման պահանջ ներկայացնելուն՝ կապված.
- 38.1. այլ տրանսպորտային միջոցների վնասման կամ ոչնչացման հետ,
- 38.2. այլ տրանսպորտային միջոցներում գտնվող գույքի վնասման կամ կորստի հետ,
- 38.3. շարժման մեջ գտնվող SU հետ բախման արդյունքում այլ շարժական կամ անշարժ գույքի վնասման կամ կորուստի հետ,
- 38.4. ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության կորստի (ժամանակավոր կամ մշտական) հետ:
- 39. 38 հոդվածում նշված պատահարը չի համարվում ապահովագրական և դրա հետևանքով պատճառված վնասները չեն հատուցվում, եթե դրանք հասցվել են՝
- 39.1. Աշխատակիցներին (այն դեպքում, երբ ԱՊԱՀՈՎԱԳՐԻ է հանդիսանում իրավաբանական անձը) և/կամ նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նպատակով օգտագործվող ունեցվածքին (գույքին), նրանց կողմից այն պարտականությունների իրականացման ժամանակ, որոնք բխում են ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (ՇԱՀԱՌՈՒԻ) հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերից,
- 39.2. Ապահովագրության պայմանագրում նշված SU իվարորդին և/կամ ուղևորին և/կամ SU առկա գույքին,
- 39.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձի) ընտանիքի անդամներին, խնամակալներին, ինչպես նաև այն քաղաքացիներին և/կամ նրանց գույքին, ովքեր ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձի) հետ վարում են համատեղ տնտեսություն, եթե ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձը) ֆիզիկական անձ է,
- 39.4. ԱՊԱՀՈՎԱԳՐԻՆ՝ Ապահովագրված անձի կողմից,
- 39.5. Գույքին, որը տնօրինում, օգտագործում և/կամ տիրապետում է ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձը) կամ գույքին, որը ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձը) ստացել է քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված որևիցե այլ հիմքով,

- 39.6. անձանց և/կամ նրանց գույքին SU միջոցով մրցությունների, փորձարկումների կամ ուսումնական երթևեկության ժամանակ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
- 39.7. Շրջապատող բնական միջավայրին,
- 39.8. Հնարձ և այլ եզակի առարկաներին, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից և մետաղներից պատրաստված իրերին, կրոնական պաշտամունքի առարկաներին, հավաքածուներին, նկարներին, ձեռագրերին, դրամանիշերին և արժեթղթերին, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
- 39.9. Տուժողի կողմից ապահովագրական պատահարի ի հայտ գալու նպատակով իրագործվող դիտավորյալ գործողությունների արդյունքում,
- 39.10. Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության տարածքից (երթուղուց) դուրս SU օգտագործման դեպքում:
- 39.11. SU, որն այլ անձանց անօրինական գործողությունների արդյունքում դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից,
- 39.12. Ցանկացած ռազմական գործողությունների, միջոցառումների, ուսուցումների և դրանց հետևանքների արդյունքում (անկախ այն բանից՝ դրանք հայտարարված են, թե ոչ), ինչպես նաև քաղաքացիական պատերազմի, զինված ուժերի կամ ահաբեկիչների գործողությունների, ժողովրդական հուզումների և գործադուլների, սադրիչ գործողությունների արդյունքում,
- 39.13. Ատոմային պայթյունի ուղղակի կամ անուղղակի ազդեցության, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով կապված ատոմային էներգիայի ցանկացած կիրառման հետ,
40. Համաձայն սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ ապահովագրական պատահար չի համարվում տուժող անձանց գույքին պատճառված վնասը, եթե այն հետևանք է.
- 40.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձի) դիտավորության,
- 40.2. Ալկոհոլի, թմրանյութի կամ տոքսիկ նյութերի ազդեցության տակ գտնվող անձի կողմից SU վարման,
- 40.3. Իրադարձությունների, որոնցում SU հանդես է եկել որպես հանցագործություն կատարելու միջոց կամ գործիք,
- 40.4. SU շահագործումն արգելող անսարքությունների առկայության դեպքում,
- 40.5. Ապահովագրության պայմանագրում նշված՝ SU ուղևորների քանակի և ծանրաբեռնվածության սահմանային նորմերի խախտման:
41. Համաձայն սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ ապահովագրական պատահար չի համարվում տուժող անձանց գույքին վնաս հասցնելը, եթե
- 41.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (Ապահովագրված անձը), ապահովագրված տրանսպորտային միջոցի վարորդը փախուստի է դիմել ճՏՊ տեղի ունենալու վայրից, լքել է ճՏՊ վայրը, ճՏՊ տեղի ունենալուց հետո տեղաշարժել է SU կամ խուսափել է անցնել բժշկական հետազոտություն,
- 41.2. Վնասը հասցվել է՝
- 41.2.1. SU գրանցման ներկայացնելու և/կամ տեխնիկական զննման համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե վնասը տեղի ունենալու ժամանակ նշված գործողությունները կատարված չեն եղել,
- 41.2.2. Հետևյալ գործողության ժամկետի ավարտից հետո՝
- «Տրանզիտ» գրանցման նշանների (պետհամարանիշների), եթե գրանցման ենթակա SU սահմանված ժամկետում չի գրանցվել ոստիկանական մարմինների կողմից,
 - տեխնիկական զննման անցման հավաստագրի,
 - SU գրանցման փաստաթղթի (SU գրանցման վկայագիր կամ SU տեխնիկական անձնագիր),
 - SU վարող անձին պատկանող վարորդական իրավունքի:

Ապահովագրական գումար

42. Ապահովագրական գումարը (գումար, որի սահմաններում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պարտավորվում է իրականացնել հատուցում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում) որոշվում է ԿՈՂՄԵՐԻ համաձայնությամբ: Ապահովագրական գումարը կարող է լինել «ընդհանուր» և «ըստ պատահարի»:
43. Ապահովագրական պայմանագրում կարող են սահմանվել առանձին ապահովագրական գումարներ՝
- տուժողների կյանքին և առողջությանը պատճառված վնասի համար,
 - տուժողների ունեցվածքին հասցված վնասի համար:

**ԲԱԺԻՆ 5: ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԺՔԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ- «Բաժին Գ»**

44. Դժբախտ պատահարներից ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ԱՊԱՀՈՎԱԳՐԻ կամ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին ապահովագրված SU գտնվող անձանց գույքային շահերը՝ կապված կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի, ներառյալ աշխատունակության կորստի հետ:
45. Դժբախտ դեպքերից ապահովագրական պայմանագիրը կարող է կնքվել:

- 45.1. «Համամասնական համակարգով»,
45.2. «Նստատեղերի համակարգով»:
46. Նստատեղերի համակարգով ապահովագրության դեպքում ապահովագրված նստատեղերի քանակը չի կարող գերազանցել ապահովագրված SU տեխնիկական անձնագրում սահմանված նստատեղերի քանակը: Ընդ որում նստատեղերի համակարգով ապահովագրության դեպքում կարող է ապահովագրվել կամ SU միայն մեկ նստատեղ՝ վարորդին, կամ SU տեխնիկական անձնագրում սահմանված նստատեղերն ամբողջությամբ:
47. Սույն կանոնների 45-րդ կետով նախատեսված ապահովագրության դեպքում ապահովագրական գումարը կազմում է՝
- 47.1. «Նստատեղերի համակարգով»՝ ապահովագրական գումարը սահմանվում է յուրաքանչյուր նստատեղի համար առանձին:
- 47.2. «Համամասնական համակարգով»՝ SU ամբողջ ուղեխցիկի համար սահմանվում է ընդհանուր ապահովագրական գումար: Ապահովագրական պատահարի առաջացման պահին SU գտնվող յուրաքանչյուր ուղևոր (ներառյալ վարորդը) համարվում են ապահովագրված ընդհանուր ապահովագրական գումարի հետևյալ չափաբաժիններով.
- 47.2.1. մեկ ապահովագրված անձի համար՝ ընդհանուր ապահովագրական գումարի 40%-ի չափով,
47.2.2. երկու ապահովագրված անձի համար՝ ընդհանուր ապահովագրական գումարի 35%-ի չափով,
47.2.3. երեք ապահովագրված անձի համար՝ ընդհանուր ապահովագրական գումարի 30%-ի չափով,
47.2.4. չորս և ավելի ապահովագրված անձանց համար ընդհանուր ապահովագրական գումարը բաշխվում է նրանց մեջ հավասար չափաբաժիններով:
48. «Նստատեղերի համակարգով» դժբախտ դեպքերից ապահովագրության պայմանների համաձայն՝ ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված SU վնասման/ոչնչացման հետևանքով անձի կյանքին կամ առողջությանը պատճառված հետևյալ վնասը.
- 48.1. դժբախտ պատահարի հետևանքով ԱՊԱՀՈՎԱԴԻԻ (ապահովագրված անձի) աշխատունակության ժամանակավոր կորուստը,
48.2. դժբախտ պատահարի հետևանքով ԱՊԱՀՈՎԱԴԻԻ (ապահովագրված անձի) հաշմանդամությունը,
48.3. դժբախտ պատահարի հետևանքով ԱՊԱՀՈՎԱԴԻԻ (ապահովագրված անձի) մահը:
49. Դժբախտ դեպքերից ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար չի համարվում ԱՊԱՀՈՎԱԴԻԻ (ապահովագրված անձի) մահը, հաշմանդամությունը, կամ աշխատունակության կորուստը, որոնք ուղղակի կամ անուղղակի վրա են հասել.
- 49.1. Ապահովագրական պատահարի առաջացմանն ուղղված ԱՊԱՀՈՎԱԴԻԻ, ապահովագրված անձի կամ ՇԱՀԱՌՈՒԻ դիտավորյալ գործողությունների արդյունքում՝ ներառյալ ինքնասպանությունը (ինքնասպանության փորձը) և սեփական անձին մարմնական վնասվածքներ հասցնելը,
49.2. SU վարորդի ակոհոլի, թմրանյութի կամ տոքսիկ նյութերի ազդեցության տակ գտնվելու և դրանով պայմանավորված նրա գործողությունների հետևանքով,
50. «Նստատեղերի համակարգով» Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ վճարում է ապահովագրական հատուցում հետևյալ սահմանաչափերով.
- 50.1. մահվան դեպքում՝ ապահովագրական գումարի 100%-ի չափով,
50.2. հաշմանդամության դեպքում՝
- 50.2.1. առաջին խմբի հաշմանդամներին՝ ապահովագրական գումարի 100%-ի չափով,
50.2.2. երկրորդ խմբի հաշմանդամներին՝ ապահովագրական գումարի 75%-ի չափով,
50.2.3. երրորդ խմբի հաշմանդամներին՝ ապահովագրական գումարի 50%-ի չափով:
51. SU շահագործման ընթացքում ծագած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում (բացառությամբ սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ 48.1 կետում թվարկված դեպքերի հետևանքով առաջացած անաշխատունակության) վճարվում է ապահովագրական հատուցում յուրաքանչյուր անաշխատունակ օրվա համար ապահովագրական գումարի 0.2%-ի չափով, սկսած 7-րդ օրվանից, սակայն ոչ ավել քան ապահովագրական գումարի 20%-ը:

ԲԱԺԻՆ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ապահովագրական պայմանագրի կնքումը

52. Ապահովագրական պայմանագիրը կնքվում է ԱՊԱՀՈՎԱԴԻԻ կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա:
53. ԱՊԱՀՈՎԱԴԻԻԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ պահանջով պարտավոր է տրամադրել.
- 53.1. Իրավաբանական անձ ԱՊԱՀՈՎԱԴԻԻԻ հիմնադիր փաստաթղթեր,
53.2. ԱՊԱՀՈՎԱԴԻԻԻ կամ նրա անունից հանդես եկող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ,
53.3. ԱՊԱՀՈՎԱԴԻԻԻ ներկայացուցչի կարգավիճակը և լիազորությունների ծավալը հաստատող լիազորագիր կամ այլ փաստաթուղթ,
53.4. SU գրանցման փաստաթղթեր, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ պահանջով ապահովագրվող շահը հաստատող փաստաթղթեր,
53.5. Ապահովագրական ռիսկը գնահատելու համար Ապահովագրողին անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

54. Ապահովագրական պայմանագիր կնքելիս ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ (նրա ներկայացուցիչը) ՏՄ պետք է ներկայացնի ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ներկայացուցչին ստուգման համար: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի մերժել ապահովագրական պայմանագրի կնքման հայտը (չկնքել ապահովագրական պայմանագիր):

Չհատուցվող գումար

55. ԿՈՂՄԵՐԻ համաձայնությամբ ապահովագրական պայմանագրում (բացառությամբ ԼՍ ապահովագրության) կարող է նախատեսվել ԱՊԱՀՈՎԱԴԻՐԻ մասնակցություն ապահովագրական հատուցման մեջ՝ չհատուցվող գումար:

56. Չհատուցվող գումարը կարող է լինել «ոչ պայմանական» և «պայմանական».

56.1. «Ոչ պայմանական» չհատուցվող գումարը ենթադրում է, որ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց սահմանված չհատուցվող գումարի չափով,

56.2. «Պայմանական» չհատուցվող գումարը ենթադրում է, որ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ազատվում է ապահովագրական հատուցումը վճարելուց, եթե այն չի գերազանցում կամ հավասար է սահմանված չհատուցվող գումարի չափին, սակայն այդ չափը գերազանցելու դեպքում, հատուցումը վճարելիս, չհատուցվող գումարը հաշվարկի մեջ չի ներառվում:

Ապահովագրավճար

57. Ապահովագրական պայմանագիր կնքելիս ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ սահմանում է ապահովագրավճարի չափը, որը պետք է վճարի ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ: Ապահովագրավճարի վճարման կարգը սահմանվում է ապահովագրական պայմանագրով (վկայագրով):

58. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի ապահովագրավճարի չափը որոշելիս բազային ապահովագրական սակագնի նկատմամբ կիրառել իջեցնող կամ բարձրացնող գործակիցներ, որոնց մեծությունը որոշվում է կախված ռիսկի գործոններից՝ համաձայն սույն ԿԱՆՈՆՆԵՐԻՆ Կից հավելված 1-ով սահմանվող «Բոնուս-Մալուս» համակարգի:

59. Տարածամկետման ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած ապահովագրական հատուցումը վճարվում է միայն պայմանագրի ամբողջ ժամկետի համար ապահովագրավճարի վճարումից հետո:

60. Ապահովագրավճարը անկանխիկ եղանակով վճարելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ պարտավոր է վճարման հանձնարարականում հղում կատարել հաշվի համարին և ամսաթվին, որի հիման վրա կատարվում է ապահովագրավճարի վճարումը, և/կամ ապահովագրական պայմանագրի (վկայագրի) համարին, որով իրականացվում է ապահովագրավճարի վճարում: Ապահովագրավճարը համարվում է վճարված ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հաշվարկային հաշվին մուտքագրվելու պահին: Ապահովագրավճարը կամ դրա մի մասը ապահովագրական պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ամբողջությամբ ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, սկսած այն ամսաթվից, որը նշված է եղել որպես ապահովագրավճարի վճարման կամ դրա հերթական մասի վճարման ամսաթիվ, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

61. Պայմանագրով կարող են նախատեսվել ապահովագրավճարի հերթական մասնաբաժնի չվճարումից բխող այլ հետևանքներ, այդ թվում.

61.1. Պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի հերթական մասնաբաժինը ժամանակին չվճարելու դեպքում Ապահովագրի իրավունք ունի միակողմ լուծելու պայմանագիրը սկսած նշված մասնաբաժնի վճարման համար սահմանված վերջնաժամկետից,

61.2. Պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից, եթե ապահովագրավճարի հերթական մասնաբաժինը չի վճարվել մինչև դրա վճարման համար սահմանված վերջնաժամկետը:

62. Մեկ տարուց պակաս ապահովագրության ժամանակ սակագինը հաշվարկվում է ըստ հետևյալ աղյուսակի.

Ապահովագրության ժամկետ ամիսներով	Վճարվելիք ապահովագրավճար տոկոսներով տարեկան ապահովագրավճարի նկատմամբ
1	30 %
2	37 %
3	44 %
4	50 %
5	56 %
6	63 %
7	69 %
8	75 %

9	81 %
10	88 %
11	94 %
12	100 %

Պայմանագրի ուժի մեջ մտնելը, դրա գործողությունը

63. Ապահովագրական պայմանագիրը ուժի մեջ է մտնում պայմանագրում նշված ժամկետից:

Ռիսկի աստիճանի փոփոխություն

64. Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում, ապահովագրական պայմանագրի կնքման ժամանակ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ներկայացված հանգամանքների յուրաքանչյուր փոփոխության մասին ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ պարտավոր է անհապաղ հայտնել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ցանկացած հնարավոր միջոցով (իսկ երեք աշխատանքային օրվա ընթացքում նաև գրավոր), այդ թվում, եթե փոփոխությունը վերաբերում է հետևյալ հանգամանքներին.

64.1. ՏՄ օտարում, գրավադրում և/կամ տնօրինման և օգտագործման այլ սահմանափակում,

64.2. համարանշված մասերի փոփոխություն (թափք, շարժիչ և այլն),

64.3. ՏՄ բանալիների կամ գրանցման փաստաթղթերի կորուստ,

64.4. փոփոխություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:

65. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ռիսկի մեծացման դեպքում իրավունք ունի պահանջել ապահովագրական պայմանագրի պայմանների վերանայում:

66. Եթե ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ (ՇԱՀԱՌՈՒՆ) սույն կանոնների 65-րդ կետի հիմքերով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ապահովագրական պայմանագրի պայմանները փոխելու կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելու պահանջը մերժում է, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միակողմանի կարգով լուծել ապահովագրական պայմանագիրը:

67. ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (ՇԱՀԱՌՈՒԻ) կողմից սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ 64-րդ կետում սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ պահանջելով դրա հետ կապված վնասների հատուցում:

Այդ դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ չի կրում ապահովագրական հատուցում վճարելու որևէ պարտավորություն այն պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխությունից հետո:

Ապահովագրական պայմանագրի դադարումը

68. Ապահովագրական պայմանագրի գործողությունը դադարում է, եթե.

68.1. ապահովագրական պայմանագրի գործողության ժամկետը ավարտվել է,

68.2. ապահովագրական պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ կատարել է ապահովագրական հատուցում վճարելու գծով իր պարտավորությունները,

68.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ հրաժարվել է պայմանագրից: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի հրաժարվել ապահովագրական պայմանագրից ցանկացած պահին՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով ապահովագրողին, պայմանով, որ հրաժարման պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել,

68.4. ապահովագրական պայմանագիրը լուծվել է ԱՊԱՀՈՎԱԳՐԻ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ փոխհամաձայնությամբ,

68.5. ապահովագրական պայմանագիրը լուծվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՒ նախատեսված այլ հիմքերով:

68.6. տեղի է ունեցել ապահովագրված ՏՄ կորուստ, որը առաջացել է ապահովագրական պատահար չհանդիսացող հանգամանքների հետևանքով,

69. Ապահովագրական պայմանագրի լուծման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ կիրառում է վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկման ստորև նշված երկու եղանակներից որևէ մեկը՝

69.1. Ժամանակին համընթաց (pro rata) մեթոդով, այսինքն համամասնորեն վերադարձնում է ապահովագրական պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը առանց որևէ մասհանումների,

69.2. Կարճաժամկետ (short term), այսինքն նետոտ ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է ապահովագրական պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը: Նետոտ ապահովագրավճար է համարվում ապահովագրավճարի ռիսկային մասնաբաժինը, որն առաջանում է բրուտոտ ապահովագրավճարի և գործառնական և պայմանագրի թողարկման համար կատարվող այլ ծախսերի բեռնվածության տարբերությունից: Բեռնվածության գումարը կազմում է առաջին տարվա ապահովագրավճարի 25%-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա ապահովագրավճարի 15%-ը.

70. ՏՄ առևանգման կամ ամբողջական ոչնչացման դեպքում ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում:

71. Ապահովագրական պայմանագրի լուծման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պարտավոր է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ վերադարձնել նրան տրված ապահովագրական վկայագիրը:

72. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ նախաձեռնությամբ ապահովագրական պայմանագրի լուծման դեպքում, վերջինս ԱՊԱՀՈՎԱԳՐԻՆ վերադարձնում է վճարված ապահովագրավճարը համաձայն ԿԱՆՈՆՆԵՐԻ 68-րդ կետի:

ԲԱԺԻՆ 7: ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ԱՊԱՀՈՎԱԳՐԻ պարտականությունները ապահովագրական պարտահարի տեղի ունենալու դեպքում

73. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ, լիազորված վարորդը կամ շահառուն պարտավոր է.
- 73.1. Անհապաղ հայտնել այդ մասին իրավապահ մարմիններին, հրշեջ ծառայությանը (եթե տեղի է ունեցել հրդեհ) կամ կախված պատահարի բնույթից՝ համապատասխան վթարային ծառայությանը,
- 73.2. Ապահովագրական պատահարի մասին անպահաղ հայտնել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ կամ նրա ներկայացուցչին,
- 73.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ պարտավոր է ապահովել ապահովագրական պատահարի մասին անհապաղ տեղեկացումը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ, դեպքի վայրում սպասել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ներկայացուցչի ժամանմանը և հետո խիստ հետևել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ներկայացուցչի հրահանգներին: Ապահովագրի, վարորդի կամ շահառուի կողմից սույն կետի պահանջների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ապահովագրական հատուցման մերժման հիմք է հանդիսանում:
- 73.3.1. Ապահովագրված տրանսպորտային միջոցի վարորդը և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ներկայացուցիչը ստորագրում են ՃՏՊ հանգամանքների վերաբերյալ Ակտ: Դեպքի վայրում համապատասխան մարմինների՝ Ոստիկանության, բժշկական ծառայության, փրկարարների, Հրշեջ ծառայության և այլնի առկայության դեպքում վերջիններս կարող են ներգրավվել նախնական Ակտի կազմմանը և ստորագրմանը:
- 73.4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին դիմումները ներկայացվում են գրավոր ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ կամ նրա ներկայացուցչի կողմից, որը տեղյակ է ապահովագրական պատահարի տեղի ունենալու մանրամասներին:
- 73.5. Ջննման նպատակով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ներկայացուցչին ներկայացնել վնասված ՏՄ և նրա հետ համաձայնեցնել հատուցման (հայցի) կարգավորման հետ կապված քայլերը:

Ապահովագրական պարտահարի տեղի ունենալու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ներակայացվող փաստաթղթերը

74. Ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը կայացնելու համար ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ (ՇԱՀԱՌՈՒՆ) պարտավոր է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ներկայացնել հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.
- 74.1. ապահովագրական պատահարի մասին գրավոր դիմում,
- 74.2. ապահովագրական վկայագիր (պայմանագիր),
- 74.3. ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատող տեղեկանք՝ տրամադրված համապատասխան իրավասու մարմնի կողմից կամ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից լիազորված փորձագետների կողմից. ՏՄ վնասման դեպքում պետավտոտեսչության կողմից տրամադրված սահմանված ձևի տեղեկանք, ինչպես նաև վարչական իրավախախտման գործով կազմված արձանագրություն և տեղեկանք (կամ դրանց պատճեններ): Հրդեհի մասին տեղեկանքը պարտադիր պետք է պարունակի հրդեհի պատճառների, դրա արդյունքում վնաս պատճառված գույքերի մասին տեղեկատվություն և այլն: Հրդեհի դեպքում պետք է ներկայացվի համապատասխան իրավասու մարմնի կողմից կայացված որոշումը կամ դրա պատճենը:
- 74.4. Վնասի չափը հաստատող փաստաթղթեր,
- 74.5. այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ կլինեն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելու համար:
75. Ապահովագրված ՏՄ առևանգման կամ գողության դեպքում լրացուցիչ 74-րդ կետին ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ պարտավոր է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ներակայացնել հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.
- 75.1. ՏՄ գրանցման փաստաթղթերը (գրանցման վկայականը, ՏՄ տեխնիկական անձնագիրը, կամ դրանց փոխարինող փաստաթղթերը), ինչպես նաև տվյալ ՏՄ փականների բանալիների բնօրինակների լրիվ հավաքածուն: Այն դեպքում, երբ ՏՄ գրանցման վկայականը և/կամ անձնագիրը կցված են քրեական գործի նյութերին, ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ պարտավոր է ներկայացնել տվյալ փաստաթղթերի՝ քննիչի կողմից հաստատված պատճենները,
- 75.2. Քրեական գործի հետաքննության արդյունքների վերաբերյալ ոստիկանությունից ստացված ստանդարտ ձևի տեղեկանքը՝ ոչ ուշ քան դրա կազմումից 30 օրվա ընթացքում,
76. ԱՊԱՀՈՎԱԳՐԻ (իսկ եթե ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ ՏՄ սեփականատերը չէ, ապա նաև ապահովագրված ՏՄ սեփականատիրոջ) գրավոր հայտարարությունն առ այն, որ պարտավորվում է ՏՄ հայտնաբերման դեպքում վերադարձնել ՏՄ և ԼՍ իրական արժեքի սահմաններում ստացված ապահովագրական հատուցումը:
77. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԻՑ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց պատշաճ կարգով վավերացված պատճենները ստանալուց հետո ոչ ուշ քան 30 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է քննել ԱՊԱՀՈՎԱԳՐԻԸ հայցը:

ԲԱԺԻՆ 8: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ապահովագրական հատուցման վճարման ընդհանուր պայմանները

78. Հատուցման ենթակա գումարի հաշվարկը իրականացվում է հաշվի առնելով.
- 78.1. ապահովագրական պատահարի արդյունքում հասցված վնասի չափը,

- 78.2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ պատասխանատվության սահմանաչափը,
78.3. ապահովագրության «լրիվ» և «ոչ լրիվ համամասնական» լինելը,
78.4. չհատուցվող գումարը (պայմանական կամ ոչ պայմանական),
78.5. ՏՄ մաշվածությունը,
78.6. ՏՄ և ԼՍ մնացորդային արժեքները:
79. ՏՄ վնասման, լրիվ կործանման կամ առևանգման (գողության) դեպքում ապահովագրական հատուցումը իրականացվում է հաշվի առնելով ՏՄ մաշվածությունը: Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրված ՏՄ նկատմամբ կիրառվում են տարեկան մաշվածության հետևյալ տոկոսադրույքները հաշվարկված ապահովագրական գումարի նկատմամբ.
- ՏՄ առաջին տարվա շահագործման համար՝ 20%,
 - ՏՄ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ տարվա շահագործման համար՝ 10%
- Մաշվածությունը հաշվարկվում է սկսած ՏՄ թողարկման տարվանից մինչև ապահովագրական պատահարի առաջացման օրը (համամասնորեն ապահովագրական պայմանագրի գործողության ցանկացած օրվա համար):
80. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի արդյունքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ հասցված վնասը հատուցվում է երրորդ անձանց կողմից, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ հատուցում է միայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանց կողմից իրականացված հատուցման գումարի տարբերության չափով:
Մեղավոր անձի կողմից նրան հասցված վնասի ամբողջական հատուցման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պարտավոր է վերադարձնել ապահովագրական հատուցումը:
81. Ապահովագրական պայմանագրով կարող է նախատեսվել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ուղեգրով (վերանորոգման հաշվարկ) ապահովագրական գումարի սահմաններում վնասված ՏՄ վերանորոգում ավտոմեքանիկայի կետերում, որոնց հետ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ունի համապատասխան պայմանագրեր: Եթե պայմանագրով նախատեսված է ոչ պայմանական չհատուցվող գումար, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ վճարում է (ետ է վերադարձնում) նախատեսված չհատուցվող գումարը:

Ապահովագրված ՏՄ-ի վնասման դեպքում հատուցման ծավալը

82. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ հատուցում է.
- 82.1. Ապահովագրված ՏՄ և ԼՍ փրկությանն ուղղված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, ներառյալ մինչև մոտակա վերանորոգման կետ վնասված ՏՄ տեղափոխման ծախսերը, եթե այն չի կարող շարժվել ինքնուրույն,
82.2. Ապահովագրական պատահարի հետ կապված վերանորոգման արժեքը,
82.3. Թաքնված վնասների և թերությունների վերացման ծախսերը, եթե փաստաթղթերն հիմնավորված է, որ նշված վնասները և թերությունները առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով: Վերանորոգման աշխատանքների ընթացքում թաքնված վնասների և թերությունների հայտնաբերման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պարտավոր է մինչև դրանց վերացումը գրավոր տեղեկացնել դրանց մասին ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ չի հատուցում թաքնված վնասների և թերությունների վերացման ծախսերը, եթե դրանք իրականացվել են առանց նրա հետ համաձայնեցնելու:
- 82.4. Վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի և նյութերի արժեքը,
83. Վերանորոգման ծախսերը վճարվում են ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ վերանորոգման և դրա համար կատարված վճարման փաստը հավաստող փաստաթղթերի բնօրինակների ներկայացման դեպքում: Ներկայացվող փաստաթղթերը պարտադիր պետք է պարունակեն հետևյալ տվյալները.
- 83.1. իրականացված աշխատանքների տեսակը առանձին-առանձին (վերանորոգում, փոխարինում, քանդում-հավաքում, ներկում և այլն)
83.2. իրականացված տեխնոլոգիական օպերացիաների անվանումը,
83.3. օգտագործված նյութերի քանակը դրանց համապատասխան չափման միավորներով,
83.4. նյութերի արժեքը,
83.5. վնասված մասերի փոխարինման համար օգտագործված նոր պահեստամասերի ցանկը, դրանց կատալոգային համարը, յուրաքանչյուր դետալի արժեքը, ընդհանուր արժեքը,
83.6. աշխատանքների ընդհանուր արժեքը:
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի ինքնուրույն ձեռքբերման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ պետք է ներկայացվեն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից ձեռք բերված պահեստամասերի ապրանքագրերը, ինչպես նաև հաշիվ-ապրանքագիրը և վճարումը հավաստող փաստաթղթերը:
84. ապահովագրական հատուցումը իրականացնելու դեպքում վերանորոգված ՏՄ մինչև հաջորդ ապահովագրական պատահարը պետք է ներկայացվի ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ զննման նպատակով: Հակառակ դեպքում վնասված դետալների գծով հետագայում ներկայացված ապահովագրական հատուցման հայցերը չեն քննարկվում և այդ հայցերի գծով ապահովագրական հատուցում չի իրականացվում:

Ապահովագրված ՏՄ և ԼՍ ոչնչացման (լրիվ, փաստացի կամ կոնստրուկտիվ) դեպքում հատուցման ծավալը

85. ՏՄ լրիվ, փաստացի կամ կոնստրուկտիվ ոչնչացման դեպքում, երբ ՏՄ վերանորոգման արժեքը (ներառյալ ապահովագրական պայմանագրով հատուցման ենթակա ծախսերը) հավասար է կամ գերազանցում է ՏՄ ապահովագրական արժեքի 85%-ը, ապահովագրական հատուցումը իրականացվում է «լրիվ ոչնչացման»

պայմաններով: Կողմերի համաձայնությամբ նշված տոկոսը, որի դեպքում վնասը դիտվում է որպես «լրիվ ոչնչացում», կարող է փոփոխվել, սակայն մինչև վերանորոգման աշխատանքների սկիզբը:

86. «Լրիվ ոչնչացում» պայմանով հայցի կարգավորման համար որոշում ընդունելիս ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՏՄ զննման արդյունքում իրականացնում է սեփական հաշվարկներ կամ հիմք է ընդունում համապատասխան գնահատող կազմակերպության հաշվարկները վերանորոգման նախնական արժեքը գնահատելու համար: Հաշվարկի հիմքում դրվում են ՏՄ արտադրող գործարանի կողմից նախատեսված տեխնոլոգիայով վերանորոգումը՝ վերանորոգման իրականացման տեղանքում (վայրում) փաստաթղթերով սահմանված վերանորոգման աշխատանքների միջնաժամկետ սակագներին համապատասխան:

87. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ապահովագրական հատուցումը վճարելիս պահում է կատարում տարեկան ապահովագրավճարի և վճարված ապահովագրավճարի տարբերության չափով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ չի հատուցում ոստիկանությունում վնասված ՏՄ հաշվառումից հանելու հետ կապված ծախսերը:

ՏՄ-ի և ԼՍ-ի գողության կամ առևանգման դեպքում հատուցման ծավալը

88. Գողացված կամ առևանգված ՏՄ դիմաց հատուցումը իրականացվում է միայն առևանգման կամ գողության փաստով հարուցված քրեական գործի նախաքննության ավարտից հետո: Առանձին դեպքերում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԻ միջև համաձայնությամբ կարող է նախատեսվել ապահովագրական հատուցման իրականացման ավելի վաղ ժամկետ: Ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրական գումարի սահմաններում՝ հաշվի առնելով ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում ՏՄ մաշվածությունը:

89. Այն դեպքում, երբ առևանգման կամ գողության պահին ՏՄ առկա չի եղել էլեկտրոնային պահպանման համակարգ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից վճարման ենթակա ապահովագրական հատուցման գումարը նվազեցվում է 10%-ով:

90. Այն դեպքում, երբ գողացված կամ առևանգված ՏՄ հայտնաբերվել է մինչև «գողություն» ռիսկի զծով կատարված հատուցումը, ՏՄ հասցված վնասը դիտարկվում է որպես երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով առաջացած և հատուցվում է համապատասխան կարգով:

91. Ապահովագրական հատուցումն իրականացնելուց հետո առևանգված կամ գողացված ՏՄ հայտնաբերման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԻԸ պարտավոր է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը:

Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցման ծավալը

92. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ, պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում, իրականացնում է տուժած անձանց կյանքին, առողջությանը և (կամ) գույքին հասցված վնասի հատուցում:

Ապահովագրական հատուցման չափը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից որոշվում է պատճառված վնասի փաստը և չափերը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

93. Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են.

93.1. Ֆիզիկական անձի առողջությանը կամ կյանքին վնաս հասցնելու դեպքում վերը նշված ծախսերի շարքին են դասվում.

— առողջության վերականգնման համար լրացուցիչ ծախսերը (հատուկ սննդի, հանգստարանային բուժման, լրացուցիչ խնամքի, պրոթեզավորման, տրանսպորտային ծախսերի, վճարովի բժշկական ծառայությունների և այլն),

93.2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձի գույքին հասցված վնասի դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշվում է գույքի կորստի կամ վնասվածքի հետևանքով առաջացած իրական վնասի չափով.

— գույքի ամբողջական կորստի դեպքում իրական վնասը հավասար է ոչնչացված գույքի իրական արժեքին՝ նվազեցված մաշվածությունը և օգտագործման ենթակա մնացորդների արժեքը,

— գույքի մասնակի վնասման դեպքում իրական վնասը հավասար է այն ծախսերի հանրագումարին, որոնք անհրաժեշտ են վնասված գույքը մինչև ապահովագրական պատահարը եղած վիճակին վերականգնելու համար:

93.3. Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա գույքին վնաս հասցնելու դեպքում ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են նաև հետևյալ ծախսերը.

— ՃՏՊ վայրից, որի մեղավորը ոստիկանության արձանագրությամբ ճանաչվել է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԻԸ (ապահովագրված անձը), երրորդ անձի ՏՄ տեղափոխման ծախսերը, եթե նշված ՏՄ ստացել է այնպիսի վնասներ, որոնց դեպքում դրանց շահագործումն արգելվում է կամ տեխնիկապես անհնար է,

— տարիանիչ կանչելու հետ կապված դիսպետչերական ծառայությունների ծախսերը,

93.4. Ապահովագրական հատուցման չափը որոշելու վերաբերյալ տուժած անձանց հետ փոխադարձ ընդունելի համաձայնության չգալու դեպքում հատուցման ենթակա վնասի չափը սահմանվում է դատական ակտերով:

93.5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԻ (ապահովագրված անձի) վնասների նվազեցման կամ դատավարության հետ կապված ծախսերը ենթակա են հատուցման, եթե նշված ծախսերը իրականացվել են համաձայն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ գրավոր ցուցումների կամ նրա գրավոր համաձայնությամբ:

93.6. Յուրաքանչյուր ապահովագրական պատահարի զծով ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի մեծությունը:

93.7. Ապահովագրական հատուցման վճարման պահ է համարվում.

- կանխիկ հաշվարկների դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ դրամարկից ապահովագրական հատուցման վճարման ամսաթիվը,
 - անկանխիկ հաշվարկների դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրսգրման ամսաթիվը:
- 93.8. Եթե ապահովագրական պատահարի պահին ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ (ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունը ապահովագրված է եղել նաև այլ ապահովագրական ընկերությունների կողմից, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ վճարում է ապահովագրական հատուցումն իր հետ կնքած ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ (ապահովագրված անձի) բոլոր ապահովագրական պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:
- ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ (ապահովագրված անձը) պարտավոր է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ գրավոր տեղեկացնել բոլոր գործող ապահովագրական պայմանագրերի մասին՝ նշելով ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրված ռիսկերը և ապահովագրական գումարները:
- 93.9. Եթե տուժած անձանց հասցված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ (ապահովագրված անձի), այլև այլ անձանց կողմից, որոնք մեղավոր են ապահովագրական պատահարի առաջանալու մեջ, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ հատուցում է միայն տուժողին հատուցման ենթակա ընդհանուր գումարի և այլ մեղավոր անձանց կողմից վճարման ենթակա գումարի տարբերության չափով:
- ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ (ապահովագրված անձը) պարտավոր է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ գրավոր տեղեկացնել վերը նշված անձանց մասին և այն գումարների մասին, որոնք պետք է գանձվեն այդ անձանցից:
- 93.10. Ապահովագրավճարի տարածամկետ վճարման դեպքում ապահովագրական հատուցման գումարից պահվում է վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինը:
- 93.11. Սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ համաձայն՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից իր պարտականությունների չկատարումը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ տալիս է իրավունք մերժելու ապահովագրական հատուցման վճարումը:
- 93.12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի երկարաձգել վճարումների ժամկետները, եթե.
- 93.12.1. նշանակված է ապահովագրական պատահարի արդյունքում առաջ եկած վնասի գնահատման լրացուցիչ փորձաքննություն,
- 93.12.2. ապահովագրական պատահարի փաստով հարուցվել է քրեական գործ՝ մինչև քրեական գործի ավարտը:

ԲԱԺԻՆ 9: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹ

94. Ապահովագրական պատահարի մասին հաղորդում ստանալով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ներկայացուցիչը ժամանելով դեպքի վայր և տեղում պարզելով գործի հանգամանքները կարող է իրականացնել ապահովագրական գործի քննության և ապահովագրական հատուցման իրականացման Արագացված վարույթ (այսուհետ՝ Արագացված վարույթ):
- 94.1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ներկայացուցիչն Արագացված վարույթ կարող է կիրառել, եթե Արագացված վարույթի կիրառմանը չի առարկում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ (լիազորված վարորդը կամ ՇԱՀԱՌՈՒՆ):
- 94.2. Արագացված վարույթի կիրառման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ կամ վերջինիս ներկայացուցիչը ապահովագրական պատահարի վայրում ինքնուրույն որոշելով դեպքի՝ ապահովագրական պատահար լինելու փաստը, որոշում է ապահովագրական հատուցման ենթակա գումարի չափը:
95. Արագացված վարույթի կիրառման դեպքում ապահովագրական հատուցման ենթակա գումարի առավելագույն չափը որոշվում է Ընկերության գործադիր տնօրենի հրամանով:
96. Արագացված վարույթի կիրառման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ (լիազորված վարորդը կամ ՇԱՀԱՌՈՒՆ) գրավոր կարգով տալիս է իր համաձայնությունը ինչպես Արագացված վարույթի կիրառմանը, այնպես էլ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ (վերջինիս ներկայացուցիչի) կողմից որոշված Ապահովագրական հատուցման ենթակա գումարի չափին:
97. Արագացված վարույթ կիրառելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պարտավոր է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ կամ ՇԱՀԱՌՈՒՆ ապահովագրական հատուցումն իրականացնել ոչ ուշ, քան Ապահովագրական պատահարն իրեն հայտնի դառնալուց հինգ բանկային օրվա ընթացքում:
98. Արագացված վարույթի կիրառման դեպքում սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՎ նախատեսված լրացուցիչ այլ գործողություններ, մասնավորապես ՃՏՊ մասին համապատասխան իրավասու մարմիններին տեղեկացնելու, վերջիններիս կողմից տրված փաստաթղթերն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ներկայացնելու, փորձաքննություն նշանակելու և այլն, չեն պահանջվում:

ԲԱԺԻՆ 10: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

99. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ, լիազորված վարորդը կամ ՇԱՀԱՌՈՒՆ.
- 99.1. չի կատարել սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՎ սահմանված իր պարտականությունները,

- 99.2. չի կատարել իր համար հնարավոր և ողջամիտ գործողություններ ապահովագրված ՏՄ վնասներից զերծ պահելու կամ պահպանելու համար,
- 99.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ չի ներկայացրել սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՎ նախատեսված և ապահովագրական հատուցումը վճարելու որոշումն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, կամ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կազմված են սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՎ սահմանված պահանջների խախտմամբ,
- 99.4. ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների խախտմամբ լքել է ՃՏՊ վայրը, կամ ՃՏՊ վայրից տեղաշարժել է ավտոմեքենան կամ խուսափել է սահմանված կարգով անցնել հարբածության առկայության ստուգում,
- 99.5. ապահովագրական պատահարի հետ կապված հանգամանքների վերաբերյալ հայտնել է անարժանահավատ տեղեկատվություն:
- 99.6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ իրականացրել է առևտրային գործունեություն՝ որպես ուղևորներ երրորդ անձանց փոխադրում՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ապահովագրական պայմանագիրը կնքելու պահին ապահովագրվող ՏՄ օգտագործման այդպիսի նպատակի մասին գրավոր չտեղեկացնելով,
- 99.7. կատարել են այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում անհնարին են դարձրել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից ապահովագրական դեպքի հանգամանքների պարզմանն ուղղված գործողությունների իրականացումը (անհնարին է դարձել ապահովագրական գործի հետաքննության անցկացումը):
100. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցումը գողացված կամ առևանգված ՏՄ համար, եթե
- 100.1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ՝ վարորդի ուղեխցիկում չգտնվելու պարագայում, ՏՄ դռները կամ պատուհանները բաց է թողել (չի կողպել) կանգառի ժամանակ,
- 100.2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ապահովագրված ՏՄ բանալիները և գրանցման փաստաթղթերը (գրանցման փաստաթղթերից որևէ մեկը) թողել է ապահովագրված ՏՄ կամ երրորդ անձանց համար հասանելի այլ վայրում: Սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՎ գրանցման փաստաթղթերի տակ հասկացվում է ՏՄ գրանցման վկայականը և անձնագիրը,
- 100.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ապահովագրված ՏՄ գողությունից կամ առևանգումից հետո ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ չի տրամադրել ապահովագրված ՏՄ բանալիների օրիգինալ կոմպլեկտը և գրանցման փաստաթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ.
- ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ նախօրոք՝ մինչև ապահովագրական դեպքի ի հայտ գալը, գրավոր տեղեկացրել է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ապահովագրված ՏՄ բանալիների, գրանցման վկայականի և/կամ անձնագրի (կամ դրանց փոխարինող փաստաթղթերի) կորստի մասին,
 - ապահովագրված ՏՄ գրանցման վկայականը, անձնագիրը և/կամ բանալիները գողացվել են ավազակության կամ կողոպուտի արդյունքում:
- 100.4. Սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՒ 100.3-րդ կետում նշված ՏՄ գրանցման փաստաթղթերը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ պետք է ներկայացնի բնօրինակը, իսկ ՏՄ բանկում գրավադրված լինելու դեպքում՝ բանկի կողմից գրավի ձևակերպման ժամանակ ՏՄ սեփականատիրոջը տրված գրանցման փաստաթղթի պատճենը՝ վավերացված բանկի կողմից: Բանկի կողմից հետագայում՝ ապահովագրական պատահարի վրա հասնելուց հետո, տրված ՏՄ գրանցման փաստաթղթերի պատճենները սույն կետի իմաստով չեն հանդիսանա պատշաճ փաստաթուղթ:
101. **Չի հապուցվում վնասը, որն առաջացել է.**
- 101.1. կրակի հետ անզգույշ վարվելու հետևանքով ապահովագրված ՏՄ և ՏՄ սրահի մասերի վնասում կրակի բաց օջախի, այդ թվում ծխելու հետևանքով,
- 101.2. ՏՄ սահմանված (թույլատրված) արագության ավելի քան 25 (քսանհինգ) տոկոսով գերազանցման հետևանքով,
- 101.3. ՏՄ հանդիպակաց ուղեմատով երթևեկելու հետևանքով, որտեղ արգելված է երթևեկությունը,
- 101.4. ՏՄ լուսացույցի կարմիր արգելող ազդանշանի տակ մուտք գործելու հետևանքով,
- 101.5. ՏՄ արգելված վայրերում հետադարձ, հետընթաց կամ շրջադարձ կատարելու հետևանքով,
- 101.6. այն դեպքում, երբ ՃՏՊ ժամանակ տրանսպորտային միջոցը գտնվել է առանց համապատասխան կառավարման՝ վարորդի ուշադրությունը զբաղված է եղել բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ այլ նմանատիպ ակսեսուարներով,
- 101.7. Եթե առկա են տվյալներ, որ ՃՏՊ ժամանակ տրանսպորտային միջոցը գտնվել է առանց համապատասխան կառավարման՝ վարորդի ուշադրությունը զբաղված է եղել բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ այլ նմանատիպ ակսեսուարներով, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ իրավունք ունի հատուցման մասին եզրակացությունը հետաձգել մինչև փաստերի ամբողջական պարզաբանումը: Տեղեկատվության հաստատման դեպքում մերժել ապահովագրական հատուցումը:
- 101.8. հակահրդեհային անվտանգության և վտանգավոր իրերի և նյութերի պահպանման ու տեղափոխման կանոնների խախտման դեպքում,
- 101.9. ՏՄ և ԼՍ շահագործման ժամանակ դրանց արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման կանոնների խախտմամբ,
- 101.10. այն գոտիներում ՏՄ օգտագործման ժամանակ, որտեղ պաշտոնապես հայտարարվել է արտակարգ իրավիճակ,
- 101.11. հանցագործության իրականացման համար ՏՄ օգտագործման ժամանակ,

- 101.12. ԱՊԱՀՈՎԱԴԻԻ, նրա ընտանիքի անդամների, ապահովագրված անձանց, ՇԱՀԱՌՈՒԻ կամ այն անձանց, որոնց տրամադրության տակ ԱՊԱՀՈՎԱԴԻԻ համաձայնությամբ եղել է ապահովագրված ՏՄ, ձեռնարկված դիտավորյալ գործողությունների (կամ դրանց իրականացման փորձի) արդյունքում, այդ թվում՝
- 101.13. ի սկզբանե անսարք ՏՄ վարում, որի շահագործումը արգելվում է ՀՀ նորմատիվ ակտերով, այդ թվում՝ պետական տեխնիկական զինում չանցած ՏՄ,
- 101.14. ակտիվի՝ կամ թմրանյութերի, ինչպես նաև տոքսիկ կամ սեդուկտիվ նյութերի ազդեցության տակ գտնվող անձի կողմից ՏՄ վարում,
- 101.15. ՏՄ վարում անձանց կողմից, որոնք չունեն համապատասխան կարգի վարորդական իրավունք, այդ թվում՝ վարորդական իրավունքներից զրկված անձանց կողմից,
- 101.16. հակահրդեհային անվտանգության և վտանգավոր իրերի և նյութերի պահպանման ու տեղափոխման կանոնների խախտում,
- 101.17. ՏՄ օգտագործում վարորդական դասընթացների և մրցումների նպատակով, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրական պայմանագրով,
- 101.18. ՏՄ և ԼՍ շահագործում դրանց արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման կանոնների խախտմամբ,
- 101.19. ՏՄ օգտագործում այն գոտիներում, որտեղ պաշտոնապես հայտարարվել է արտակարգ իրավիճակ,
- 101.20. ՏՄ օգտագործում հանցագործության իրականացման համար,
- 101.21. Անվաղողների վնասվածքը, որը պայմանավորված է ճանապարհի երթևեկելի մասի անհարթություններով կամ վատ վիճակով, սուր առարկաների վրաերթով, եթե նման վնասվածքը չի հանդիսացել ՃՏՊ պատճառ, որի արդյունքում ապահովագրված ՏՄ հասցվել են այլ վնասվածքներ:
- 101.22. Եթե ԱՊԱՀՈՎԱԴԻԻԸ ապահովագրական պայմանագիրը կնքելիս կամ դրա գործողության ընթացքում հայտնել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավասու է պահանջել ապահովագրական պայմանագիրը անվավեր ճանաչել՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվող հետևանքները:

«Ավտոկասկո» ապահովագրությամբ հապուցման ենթակա չեն.

- 101.23. Ինչպես ամբողջական ՏՄ, այնպես էլ նրա առանձին դետալների և հանգույցների բնական մաշվածությունը, շուկայական արժեքի կորուստը, արտադրական (գործարանային) թերությունը.
- 101.24. Վնասը, որը պատճառվել է ԱՊԱՀՈՎԱԴԻԻ/վարորդի և/կամ ուղևորների գույքին, որը գտնվել է ՏՄ ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ.
- 101.25. Կողմնակի և այլ ծախսերը, որոնք կարող են պայմանավորված լինել ապահովագրական պատահարով (վարչական տուգանք, վարձակալված ՏՄ օգտագործման վճար, ապահովագրված ՏՄ վերանորոգման ժամանակ հյուրանոցում կայանելու վճար, գործուղման ծախսեր, բաց թողնված շահույթ, ապահովագրված ՏՄ պարապորդ, երաշխավորման ժամկետի լրացման հետ կապված նյութական վնասներ, բարոյական վնաս), եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Չեն հապուցվում.

102. բարոյական վնասը, ածանցյալ և այլ ծախսերը, որոնք կարող են պայմանավորված լինել ապահովագրական պատահարով (տուգանք, բաց թողնված օգուտ, պարապորդ, վնասներ, այդ թվում՝ կապված երաշխիքային ժամկետի լրացման հետ, գործուղման ծախսեր և այլն),
- 102.1. վնասը, որն առաջացել է ՏՄ և ԼՍ օգտագործման հետևանքով նրանց ապրանքային գնի կորստից և բնական մաշվածությունից,
- 102.2. վնասը, որը պայմանավորված է գործարանային խոտանով, կամ խոտանով, որը առաջացել է վերանորոգման աշխատանքների ժամանակ,
- 102.3. վնասը, որը հասցվել է ապահովագրական պատահարի ժամանակ ՏՄ գտնվող իրերին կամ սարքավորումներին, եթե դրանց ապահովագրությունը չի նախատեսված ապահովագրական պայմանագրում,
- 102.4. ՏՄ ագրեգատների կամ դետալների վերանորոգումը, որոնք վնասվել էին մինչև ապահովագրական պայմանագրի գործողության սկիզբը,
- 102.5. ՏՄ ագրեգատների կամ դետալների վերանորոգումը կամ փոխարինումը, որոնց վնասումը ապահովագրական պատահարի արդյունք չէ, ինչպես նաև այն աշխատանքների իրականացումը, որոնց տեխնոլոգիական անհրաժեշտությունը չէր եղել (հարակից հարթությունների ներկում, վերանորոգման փոխարեն դետալների փոխարինում և այլն),
- 102.6. վնասը, որն ուղղակիորեն կապված չէ ապահովագրական պատահարի հետ, արտադրող գործարանի կողմից չնախատեսված տեխնոլոգիայով աշխատանքային ծախսումները,
- 102.7. ապահովագրված ՏՄ գողության կամ լրիվ ոչնչացման դեպքում այն վնասների և դեֆեկտների վերացման ծախսերը, որոնց մասին մինչև ապահովագրական պատահարի առաջանալը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ չէին տեղեկացրել,

¹ Սույն կանոններում ակտիվի ազդեցության տակ հասկացվում է ակտիվի առկայությունը անձի օրգանիզմում սկսած 0.1‰-ից:

- 102.8. Մինչև ապահովագրված SU ապահովագրելը դրա վնասվածքների և թերությունների վերացման ծախսերը, եթե մինչև ապահովագրական պատահարի առաջանալը ԱՊԱՀՆՎԱԴԻԲԸ ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻՆ չի ներկայացրել արդեն վերանորոգված SU:
103. **Հատուցման ենթակա չէ այն վնասը, որն առաջացել է.**
- 103.1. միջուկային պայթյունի ազդեցությամբ, ինչպես նաև ռադիացիայից և ռադիոակտիվ վարակից,
103.2. Ահաբեկչական գործողությունների արդյունքում,
103.3. ռազմական գործողությունների, ինչպես նաև ռազմական հնարքների և այլ ռազմական միջոցառումների արդյունքում,
103.4. քաղաքացիական պատերազմի, ցանկացած բնույթի քաղաքացիական ընդվզումների կամ գործադուլների հետևանքով,
103.5. պետական մարմինների հրահանգով ապահովագրված SU առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, կալանքի կամ ոչնչացման հետևանքով:

ԲԱԺԻՆ 11: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

104. Առանց ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻ գրավոր համաձայնության ԱՊԱՀՆՎԱԴԻԲԸ իրավունք չունի երրորդ անձանց հատուցումն իրականացնել, խոստումներ տալ, վնասների կամավոր հատուցման առաջարկություններ անել, լիովին կամ մասնակի ճանաչել իր մեղավորությունը, կատարել որևէ գործողություն, ինչը կվկայի պատահարի գործում իր պատասխանատվության ընդունման մասին, հրաժարվել վարչական վարույթի իրականացումից և կատարել այնպիսի գործողություններ, որոնք անհնարին կդարձնեն ապահովագրական պատահարի հանգամանքների պարզումն ու ուսումնասիրումը:
105. ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻ իրավունք ունի վերանորոգման իրականացումից հետո ԱՊԱՀՆՎԱԴԻԲԻՑ պահանջել իրեն փոխանցել վերանորոգման ընթացքում փոխված դետալները և հանգույցները:
106. Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրական հատուցումը վճարելուց հետո ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը) նվազեցվում է կատարված ապահովագրական հատուցման չափով: ԱՊԱՀՆՎԱԴԻԲԸ իրավունք ունի վերականգնել ապահովագրական գումարի (պատասխանատվության սահմանաչափի) չափը՝ սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ համաձայն ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետի համար կնքելով լրացուցիչ պայմանագիր և վճարելով լրացուցիչ ապահովագրավճար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով (մեկ տարի ժամկետով պայմանագրերի համար).

$$U_{\text{լր}} = 2q \cdot U_{\text{գ}} \cdot \frac{U_{\text{մն}}}{12}$$

- Ալր - սկզբնական ապահովագրական գումարը վերականգնելու համար լրացուցիչ ապահովագրավճար,
Հվ - վճարվող ապահովագրական հատուցման գումար,
Uգ - պայմանագրով գործող ապահովագրական սակագին,
Ամն - պայմանագրի չլրացած լրիվ ամիսների քանակ:
Լրացուցիչ պայմանագիրը կնքվում է գրավոր:

ԲԱԺԻՆ 12: ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

107. Ապահովագրական հատուցման արդյունքում վճարված հատուցման գումարի սահմաններում ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻՆ անցնում է ապահովագրական պատահարի արդյունքում ծագած պահանջի իրավունքը, որը ունեն ԱՊԱՀՆՎԱԴԻԲԸ (ՇԱՀԱՌՈՒՆ, Ապահովագրված անձը) վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:
108. ԱՊԱՀՆՎԱԴԻԲԸ (ՇԱՀԱՌՈՒՆ, Ապահովագրված անձը) պարտավոր է ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻՆ փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, հայտնել իրեն հայտնի ամբողջ տեղեկատվությունը և ձեռնարկել բոլոր միջոցները (մեղավոր կողմի ներկայությամբ վնասված SU ներկայացնել լրացուցիչ զննման և այլն), որոնք անհրաժեշտ են ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻՆ իրեն փոխանցված իրավունքների իրացման համար:
109. Եթե ԱՊԱՀՆՎԱԴԻԲԸ հրաժարվել է ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻ կողմից հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքի իրացումը ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԻ կողմից անհնար է դարձել ԱՊԱՀՆՎԱԴԻԲԻ (ՇԱՀԱՌՈՒՆ) մեղքով, ապա ԱՊԱՀՆՎԱԳՐՈՂԸ ազատվում է ապահովագրական հատուցման կամ դրա մի մասի վճարման պարտականությունից և ստանում է ավել վճարած ապահովագրական հատուցման վերադարձի իրավունք:

ԲԱԺԻՆ 13: ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

110. ԱՊԱՀՆՎԱԴԻԲԸ իրավունք ունի սույն Կանոններով սահմանված ապահովագրական հատուցման համար փաստաթղթերը ներկայացնել Հատուցման դիմումի ներկայացման օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում և ընդունում է, որ այդ ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր սահմանված երկամսյա ժամկետը երկարաձգելու մասին որևէ միջնորդություն (այն դեպքում, երբ Ապահովագիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու

մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս ժամկետով) չներկայացնելու դեպքում, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԻԻ կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը սահմանված ժամկետը լրանալուց հետո 3 օրվա ընթացքում:

111. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ իրավունք ունի պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու սույն ԿԱՆՈՆՆԵՐՈՎ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:
112. Սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ համաձայն կնքված պայմանագրերի գործողության ընթացքում կամ հետո ԿՈՂՄԵՐԻ միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԲԱԺԻՆ 14: ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

113. Ապահովագրության պայմանագրերը կարող են կնքվել «ՊԼԱՏԻՆՈՒՄ» ծրագրով: Համաձայն այս ծրագրի, կանոններով նախատեսված ծառայություններից բացի ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից մատուցվում են հետևյալ լրացուցիչ ծառայությունները.
- 113.1. S/Մ վերանորոգում միայն բարձրակարգ տեխնասարկման կետերում և S/Մ Պաշտոնական ներկայացուցչություններում,
- 113.2. Ընկերության մասնագետների կողմից վերանորոգման աշխատանքների մշտական վերահսկողություն,
- 113.3. Իրավաբանական խորհրդատվություն, օգնություն ՊԱՏ և այլ մարմիններից փաստաթղթերի հավաքագրման գործընթացում,
- 113.4. Մինչև 1'000'000 ՀՀ դրամ վնասի դեպքում լիազոր մարմինների կողմից տրվող եզրակացությանը կփոխարինի ընկերության փորձագետի հավաստագիրը՝ համաձայն ՀՀ օրենսդրության,
- 113.5. Հատուցում, հաշվի չառնելով դետալների մաշվածությունը՝ ՀԻՆԸ-ՆՈՐՈՎ,
- 113.6. Տեխնիկական օգնություն ճանապարհներին (բենզինի լիցքավորում, վնասված անվադողերի փոխարինում և այլն)՝ նյութերի և դետալների համար վճարում է ապահովադիրը,
- 113.7. Վարորդի և ուղևորների ապահովագրություն դժբախտ պատահարներից, յուրաքանչյուր անձի համար 1'500'000 ապահովագրական գումարով՝ «նստատեղերի համակարգով»
- 113.8. S/Մ սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն 3'000'000 ՀՀ դրամ ապահովագրական գումարով:

ԲԱԺԻՆ 15: ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ, ՎԵՐԱՑՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ

114. Ապահովագրողն իրավունք ունի միակողմ՝ առանց ապահովադրի համաձայնության փոփոխություն և/կամ լրացում կատարելու սույն կանոններում:
115. Կանոններում փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ քան մեկ ամիս առաջ գրավոր ծանուցել Ապահովադիրին:
116. Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովադիրն իրավունք ունի անմիջապես լուծելու ապահովագրության պայմանագիրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բոնուս-Մալուս հավելավճարների և զեղչերի համակարգ

Հոդված 1. 10 ամսից ոչ պակաս ապահովագրական ժամանակահատվածի արդյունքներից ելնելով՝ Ապահովագրողի կողմից կարող է կիրառվել «Բոնուս-Մալուս» զեղչերի և հավելավճարների համակարգ: «Բոնուս-Մալուս» համակարգով հաշվարկը իրականացվում է Աղյուսակ N 1-ում ներկայացված բանաձևին համապատասխան:

Հոդված 2. «Բոնուս-Մալուս» համակարգով Ապահովագրողի զեղչերն և հավելավճարները պահպանվում են ապահովագրության օբյեկտը մեկ այլով փոխարինելու ժամանակ: Ապահովագրության ընդմիջման ժամանակ Ապահովագրողի զեղչերը և հավելավճարները պահպանվում են 2 տարի:

Հոդված 3. Եթե ապահովագրության ողջ ընթացքում Ապահովագրողի կողմից չի հայտարարվել ոչ մի ապահովագրական պատահար, ապա Ապահովագրողի կամ այլ ապահովագրական կազմակերպության պահանջով Ապահովագրողը կարող է տրամադրել ապահովագրության անվթար ընթացքը հավաստող փաստաթուղթ:

«Բոնուս-Մալուս» համակարգով զեղչերի և հավելավճարների հաշվարկը

Առաջնային կնքման ժամանակ ապահովագրության պայմանագրին տրվում է սկզբնական կարգ, որին համապատասխան ապահովագրավճարը սահմանվում է 100%-ի չափով սակագնի նկատմամբ: Պայմանագրի ժամկետի երկարացման դեպքում ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է զեղչերի և հավելավճարների համակարգ («Բոնուս-Մալուս» համակարգ)՝ կախված նախորդ ապահովագրական շրջանի արդյունքներից:

Կարգի փոփոխությունը տեղի է ունենում, եթե ժամկետի հերթական երկարացման պահին կարգի նախորդ փոփոխությամբ կամ սկզբնական կարգի շնորհմամբ ապահովագրությունը գործել է 12 կամ ավել ամիս:

Եթե հաջորդ երկարացման ընթացքում տեղի է ունենում կարգի փոփոխություն, ապա նոր պայմանագրում իրականացվում է բոլոր նախկինում չհաշվառված պահանջների վերանայում, բացառությամբ հետևյալ պահանջները՝

- ռեգրեսի հայտանիշով,
- առանց ակտիվացման փոխանցման հայտանիշի,
- «Լուծված», «Մերժված», «Դիմումի մերժում» կարգավիճակներով,
- Զրոյական (չհանձնարարված) հատուցման գումարով:

Մեկ անգամ հաշվի առնված պահանջները չեն կարող կրկին հաշվի առնվել ժամկետի հաջորդ երկարացման ժամանակ: Հաշվի չառնված պահանջները վերը թվարկված հայտանիշներով (օրինակ՝ ժամանակին չկարգավորված՝ առանց ակտիվացման փոխանցման հայտանիշի) կարող են հաշվի առնվել հաջորդ երկարացման ժամանակ, եթե այդպիսի հայտանիշները ենթարկվեն փոփոխության:

Կարգի փոփոխման կանոնները որոշվում են ներքոնշյալ աղյուսակի օգնությամբ, վնասաբերության գործակցի հիման վրա:

Վնասաբերության գործակիցը հաշվարկվում է՝
$$\Omega = \frac{\sum \Theta_i}{\Pi},$$

որտեղ

Θ_i յուրաքանչյուր նոր պայմանագրով հաշվի առնված պահանջի համար վճարման հաշվառված i -րդ հատուցման չափ,

Π – հաշվառված գումարային (պլանային) ապահովագրական պարզև ըստ պայմանագրերի.

- նոր պայմանագրին նախորդող ժամանակաշրջանի համար՝ սկսած վերջին փոփոխության պահից կամ սկզբնական կարգի տրամադրումից հետո,
- առաջին խումբ չմտած, որոնց նկատմամբ առկա են նոր պայմանագրում հաշվի առնված պահանջներ:

ԼՍ գծով ապահովագրական պարզևը և ապահովագրական հատուցումը մտնում են ՏՄ ապահովագրության համար վնասաբերության գործակցի հաշվարկի մեջ:

Եթե նախորդ պայմանագրի դադարեցումից անցել է 2 տարուց ավել (ապահովագրության ընդմիջումը գերազանցում է 2 տարին), ժամկետի երկարացման ժամանակ սահմանվում է սկզբնական կարգ՝ «CO»: «Բոնուս-Մալուս» համակարգով սահմանված կարգերը պահպանվում են ապահովագրության օբյեկտը մեկ այլի փոխարինելու դեպքում:

ՏՄ ապահովագրության դեպքում կարգի փոփոխությունը՝ կախված
վնասաբերության գործակցից՝ Ω :

Աղյուսակ № 1

Ավգբնական կարգ	Գործակից ԳՔԾ-ՎՄՄԿՈ	$\Omega \leq 1$	$1 < \Omega \leq 1,25$	$1,25 < \Omega \leq 1,45$	$1,45 < \Omega \leq 1,7$	$1,7 < \Omega \leq 2$	$\Omega > 2$
C9	0,5	C9	C8	C6	C4	C2	C0
C8	0,5	C9	C7	C5	C3	C1	Y1
C7	0,5	C8	C6	C4	C2	C0	Y2
C6	0,5	C7	C4	C2	C0	Y1	Y2
C5	0,55	C6	C3	C1	Y1	Y2	Y3
C4	0,6	C5	C2	C0	Y1	Y3	Y4
C3	0,7	C4	C1	Y1	Y2	Y3	Y4
C2	0,75	C3	C0	Y2	Y3	Y4	Y5
C1	0,90	C2	Y1	Y2	Y3	Y4	Y5
C0	1,0	C1	Y1	Y2	Y4	Y5	Y6
Y1	1,1	C0	Y2	Y3	Y4	Y5	Y6
Y2	1,25	Y1	Y3	Y4	Y5	Y6	Y7
Y3	1,45	Y2	Y4	Y5	Y6	Y7	Y7
Y4	1,6	Y3	Y5	Y6	Y7	Y7	Y7
Y5	1,7	Y4	Y6	Y7	Y7	Y7	Y7
Y6	1,9	Y5	Y7	Y7	Y7	Y7	Y7
Y7	2,0	Y6	Y7	Y7	Y7	Y7	Y7